

«Հայկական ժամանակ» թերթի ղեկավարների 27-ի համարում տպագրված երիտասարդ մտավորական հրատարակչության հարցազրույցի և համաձայնագրի մասին հոդվածը շատ բնութագրական է տիրող իրականությանը: Առաջարկում ենք ընթերցել և տարածել:

ԺԻՐՈՅԻՆ ԲԱՑ ԹՈՂԵՔ, ԻՆՁ ԲՈՆԵՔ

Ժիրայր Սեֆիյանի և նրա գլխավորած «Ազատագրված տարածքների պաշտպանության» հասարակական նախաձեռնության հայացքների հետ այս կամ այն հարցերում կարելի է համաձայնվել կամ չհամաձայնվել:

Անձամբ ես սուր վեճ եմ ունեցել տղերքի հետ՝ մասնավորապես Ջավախքի խնդրի հետ կապված, եւ հիմա էլ խիստ հակադիր կարծիք ունեմ այդ հարցում: Բայց ժիրայրին չի կարելի ձեռքառալ՝ շինծու մեղադրանքներով: Որովհետեւ ժիրայրը սիմվոլ է: Ժիրայրը Մանվել չի, եւ դա նրա անզանահատելի արժեքն է հայ իրականության մեջ: Ժիրայրը մեր այն կռված տղերքն է, որ տարիների ընթացքում չի փոխանակել մարտի դաշտում իր բերած ծառայությունները երկրին նյութական բարեկեցության ու անձեռնմխելի սոցիալական կարգավիճակի հետ: Դրանով ժիրայրը մնացել է իսկական հերոս: Այսինքն, նա հերոսության իր կարգավիճակը ապացուցել է նաեւ խաղաղ տարիների իր կյանքով: Եթէ վաղը իմ երեխան ինձ հարցնի, թե՛ պապ, ո՞ւր է հերոսը՝ նա, որ ոչ թէ լեզանդներում է ապրում կամ գոհված է, այլ նա, ով հենց հիմա մեզ հետ նույն երկրում, նույն քաղաքում է, եւ նրան ցույց կտամ ժիրայր Սեֆիյանին: Եւ հանգիստ կլինեմ, որովհետեւ կիմանամ, որ իմ երեխայի համար հերոսը ոչ թէ մի անկենդան արքայազն է, այլ կենդանի իրականություն, ուրեմն եւ այս կյանքը ոչ թէ հաստատված չի փակվող խոզերի խրախճանք է միայն, այլեւ իդեալի իրական ներկայություն: Ես կարող եմ բոլոր հարցերում ճիշտ հակառակ մտածել, քան ժիրայրն է մտածում, բայց ես հանգիստ կապրեմ: Հայաստանում, քանի գիտեմ՝ ժիրայրն ու ես նույն կողմնակիցն ենք, ու պատերազմի դեպքում ժիրայրի հետեւից գնացող մարդ կլինի: Ես հերետիկոսական խոստովանություն անեմ՝ ես չեմ հավատում մեր կանոնավոր բանակի մարտունակությանը, նույնիսկ եթէ պարզվի, որ ռուսները մեզ միջուկային զենք են փոխանցել, իսկ ամերիկացիները մեզ «դաբրո» են տվել Բաքու էլ գրավել, Աջաբաղն էլ հետը: Չեմ հավատում, որովհետեւ գիտեմ, որ ճորտատիրական բանակները, ինչքան էլ լավ զինված լինեն, հաղթանակի երաշխիք չեն, չեմ հավատում, որովհետեւ գիտեմ, որ պատերազմում մենք հաղթեցինք, որովհետեւ մեր պայքարը ծնվել էր ազատական մի շարժումից, իսկ մեր թշնամին խանական ճորտի հոգեբանությամբ ասիական ղեկավարների հոտ էր: Դրա համար, քանի դեռ մեր բանակը կառուցվում է այդ նույն հոգեբանությամբ, որը փոխառված է մեր թշնամուց, ես հավատում եմ միայն կամավորականի սկզբունքին, որն էլ ամենամոտիկն է ազատականության հոգուն: Բայց կամավորականներն էլ շատ են, իսկ ես կարող եմ հույս կապել միայն նրանց հետ, ով խաղաղության տարիներին էլ մնացել է կամավորական, այլ ոչ թէ դառել է ցանկացած իշխանությանը լոյալ պալատատեր: Եթէ ժիրայրի երկրից պետք է արտաքսեն, դա կլինի մեծ հարված կամավորականության սկզբունքին, որը վատ թե՛ լավ, բայց պահել է ու դեռ պահում է մեր ազգը պետականության բացակայության ու պետականության կայացման տարիներին: Ժիրայրը նախկին դաշնակցական է: Կարելի է համոզմունքներով լինել ծայրահեղ հակոսայա Ռաշնակցության գաղափարաբանությանը, բայց թեկուք նախկին նախագահի՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ խոստովանել, որ Ռաշնակցությունը ազգային արժեք է: Մեր կարծիքով, Հայաստանի ու հայության համակարգային կենսունակությունը ապահովելու համար մեզ մոտ պետք է ապահովվեն երկու (գուցե եւ ավելի) հակադիր, ներհակ գաղափարախոսությունների գոյությունն ու իրար հետ առողջ մրցակցության պայմանները: Այնպես որ, դաշնակց պետք է նպաստի հակադաշնակի կայացմանը, իսկ հակադաշնակը ուրախանա, երբ իր առջեւ անկեղծ դաշնակ է տեսնում: Երկուսի հաշվեկշիռը կարող է ապահովել այն բազմազանությունը, որով մենք որպես համակարգ կլինենք առավել ճկուն, ուրեմն եւ առավել կայուն: Ժիրայր Սեֆիյանը այդ առումով ավելին է, քան ողջ այսօրվա հայաստանյան ՀՀ-ն՝ որպես կազմակերպություն, որն ամենից շատ է նպաստում դաշնակցական գաղափարի վարկաբեկմանը (թող ներքե ինձ այն մարդիկ, որոնք այսօր էլ գտնվելով կուսակցության շարքերում՝ մտում են իրենց մաքուր գաղափարական ու մարդկային հիմքերի վրա՝ խոսքը, իհարկե, իրենց մասին չէ): Այսօր ժիրայրը մենակով ու իրա տղերքով ավելին է, քան Ռաշնակցություն կուսակցությունը՝ որպես այդ դաշտի գաղափարների կրող ու հանուն դրանց պայքարող Հայաստանում: Այնպես որ, ժիրոն նախկին չէ, նախկին են այսօր նրանք, ով մնալով ՀՀ-ի շարքերում՝ վատնում են կազմակերպության 100-ամյա իմիջի հարստությունը: Վաղը, երբ ուշ թե՛ շուտ ՀՀ-ն էլ իշխանություն չի լինի, պետք կլինի սկսել գրոյից, ու այդ դեպքում Ռաշնակ Վահանը (Ռաշնակ Վահանը 8-րդ դարի հայ իշխան է՝ հիշատակված Ղեւոնդ պատմիչի կողմից, այլ ոչ թէ այն անձը, որի մասին դուք հիմա մտածեցիք) չի նրանց փրկողը, այլ ժիրոն, ու մի քիչ էլ գուցե հրատարակված: Եթէ ժիրայրը, որը պատերազմի տարիներից ապրում է Հայաստանում, եւ որին այդպես էլ չեն շնորհել ՀՀ քաղաքացիություն, չնայած նրա մի քանի դիմումների, ենթակա է արտաքսման՝ որպես օտարերկրյա քաղաքացի, եթէ իշխանամետ լրատվամիջոցները ցնկիկորեն հատուկ երանգով նշում են նրա օտարերկրացի լինելը, ապա պետք է հիշեցնենք, որ մեզ մոտ շատ օտարերկրացի ծագում ունեցողներ կան, ու եթէ «դեփորթ» անելու լինեն ժիրայրին, ուրեմն պետք է ստորագրահավաք կազմակերպել նաեւ մասցաձեռքերի ուղիղ ռեյտով իրենց պատմական հայրենիքներ ուղարկելու կոչով: Եթէ ժիրոն արել է բնութագրված իշխանություն փոխելու կոչեր ու դրա համար է ձեռքբերվել, ապա Հայաստանի բնակչության կեսից ավելին կարելի է նույն հողվածով բռնել: Ո՞վ մեզանից չի արել նման կոչեր վերջին տարիների ընթացքում: Իմ հարեան Վալոդից սկսած մինչեւ հենց ինձ պետք է բռնեք: Վալոդի հետ կապված, իհարկե, իմ գործը չի, բայց ահա ինձ հետ կապվածը, խնդրեմ, ներկայացնեմ որպես ինքնախոստովանալի՝ գործին կցելով անհերքելի նյութական ապացույցներ՝ մեջբերումներ իմ հողվածներից, որոնք կարելի է մեկնաբանել նույն ոճով: Ահա այդ մեջբերումները. «Երբ հասարակությունը հիմնված է իր իսկ կողմից հռչակվող արժեքների կեղծման վրա (...), ապա ճշմարտությունը ներխուժում է անապեկական գործողության ձեռով: Հակասությունը լուծվում է կրակոցի միջոցով, որը գեթ մեկ պահ միավորում է իրարից բաժանված ճշմարտությունը եւ իրականությունը: Երբ քաղաքացուն զրկում են իր քաղաքացու իրավունքից, եթէ վերջինս հետեւողական է իր քաղաքացիական գիտակցության մեջ, նա վերադառնում է որպես ահաբեկիչ: Բռնաբարված քաղաքականությունը իր միակ տանիքը գտնում է ահաբեկչական գործողության սարսափազդու ճշմարտության մեջ, ուր պատռվում են դիմակները, ու լուսավորվում է նենգափոխված իրականության դիակազերծված ծուռ ժայռը: Զաղաքացին դառնում է պարտիզան: Հայաստանում բազմաթիվ գեղեցիկ լեռներ կան, որոնք կարող են պարտիզանի ապաստանը դառնալ...»,- գրել եմ ես «Սեպտեմբերը հայոց մեջ» հոդվածում: Կամ՝ «Իրոք, եթէ իշխանությունը որպես այդպիսին պատկանում է ժողովրդին, ապա վերջինս, բնականաբար, իրավունք ունի տապալել տվյալ պահի «իշխանությունը» (այսինքն՝ վարչակարգը), եթէ այն խախտում է ժողովրդի ինքնիշխանությունը: Մեկը անխուսափելիորեն բխում է մյուսից: Եւ այստեղ խոսք լինել չի կարող որեւէ նեղ իմաստով հասկացված լեգիտիմության կամ ձեւական օրինապահության մասին, քանի որ գերագույն լեգիտիմությունը ժողովրդի ինքնիշխանությունն է: Այսինքն՝ ապստամբության իր իրավունքի (ձեւականորեն չամրագրված, բայց Սահմանադրության ոգուց տրամաբանորեն բխող) իրականացման պարագայում ինքնիշխան ժողովուրդը վեր է ամեն տեսակ այլ օրինականությունից ու ազատ է ձեւական լեգիտիմության հետեւելու պարտականությունից, քանի դեռ նախտված է իմամարտ օրենսդրական-պետական սկզբունքը: Ժողովրդական ապստամբության իրավունքը ինքն է այդ դեպքում գերագույն ու գլխավոր օրենքը, քանի որ կոչված է վերահաստատելու իր կորցրած իշխանությունը»: Սա էլ «Հայկական տերմիդորը եւ ապստամբության իրավունքը» հոդվածից: Հիմա սրանք համապատասխան կոչեր են, թե՛ ոչ, եւ չգիտեմ: Դուք կիմանաք:

**ՀՐԱՆՏ ՏԵՐ-ԱԲՐԱՎԱՄՅԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ», 27 դեկտեմբերի 2006**